Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հոկտեմբերի 18 -ի N 734 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ուղտասար գյուղի ջրամատակարարման ցանցի կառուցում»

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ուղտասար գյուղի ջրամատա-կարարման ցանցի կառուցման աշխատանքները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, Ասկերանի շրջան, Ուղտասար գյուղ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 108,252,251.00 դրամ, որից՝ 75,000,000.00 դրամ ֆինանսավորվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից, 33,252,251.00 դրամ՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից:
7.	Բարեգործությունն ստացողը	Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ուղտասար գյուղի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թ. հոկտեմբերի 21-ից մինչև 2020 թ. սեպտեմբերի 12-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թ. հոկտեմբերի 21-ից մինչև 2020 թ. սեպտեմբերի 12-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվում է կառուցել Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ուղտասար գյուղի ջրամատակարարման ցանցը: Արժեքը՝ 108,252,251.00 դրամ, որից՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ 75,000,000.00 դրամ, Արցախի Հանրապետության կառավարություն՝ 33,252,251.00 դրամ:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՇՄՇ-23» ԲԲԸ-ի կողմից Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ուղտասար գյուղում նախատեսվում է կառուցել ջրամատակարարման ցանց՝ 108,252,251.00 դրամ, որից՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ 75,000,000.00 դրամ, Արցախի Հանրապետության կառավարություն՝ 33,252,251.00 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Արցախի Հանրապետության կառավարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ